

ՄԿՍԵՆՔ, ՈՐՏԵՂԻՑ ՈՐ ԱՐԺԱՆ Է ՄԿՍԵԼ

... Իսկ պատմությունն այս արժան է սկսել 1958 թվականի վերջերից, երբ մեր գրականության անդաստանում բավականին ճանապարհ անցած, լավ-վատ գրական անուն ու փոքր ի շատե ճանաչում ստացած բանաստեղծ Պարույր Սևակը «Հայպետհրատի» գեղարվեստական գրականության բաժնին ներկայացրեց մի քանի հազար չափատողից բաղկացած իր նոր լիրո-փիլիսոփայական պոեմի ծավալուն թղթապանակը: Մի պոեմ, որը նախապես ունեցել էր «Կոմիտաս», ապա՝ «Զարմանալի զանգակատուն» և վերջապես (ծանոթ-բարեկամների դիտողություններն ու ցանկությունները հաշվի առնելուց հետո) «Անլռելի զանգակատուն» անունը: Մինչ այդ, Պարույր Սևակի հրատարակած երեք-չորս անուն բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուները («Անմահները հրամայում են», 1948 թ., «Միրո ճանապարհը», 1954 թ., «Նորից քեզ հետ», 1957 թ.) սպասվելիք գրական փառքն ու համընդհանուր ճանաչումը չբերեցին նրանց հեղինակին, թեև այդ ժողովածուներում արդեն կարելի է գտնել ոչ քիչ թվով գործեր, որոնք իրենց վրա ունեն սևակյան տաղանդի փայլատակումները: Ի՞նչ թերություններ էին վերագրվում Սևակին: Թեմայի կրկնություն, ըստ ամենայնի դեռ չկազմակերպված բանաստեղծական մտածողություն, «հայրենիք», «եղեռն», «թուրքական կոտորած» և այլ կարևոր գաղափարների շահարկում: Բայց թերևս հիմնականը և ընթերցող ու գրական մտավորականությանը նյարդայնացնողը բանաստեղծ Պարույր Ղազարյանի՝ ամենևին էլ ոչ ինքնատիպ գտնված «Սևակ» կեղծանունն էր:

«Մենք 19-րդ դարում արդեն ունեցել ենք հայ գրականության դասական, բանաստեղծ Ռուբեն Սևակ, հիմա ունենք ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Գուրգեն Սևակ, Ամերիկայում ապրում և գործում է համաշխարհային անուն ունեցող կենսաքիմիկոս, ակադեմիկոս Մանասե Սևակը, սա էլ ի՞նչ Սևակ է, – տրտնջում էր մեր քննադատներից մեկը, – այս նորաթուխ երիտասարդին ի՞նչ է, հանգիստ ու դադար չե՞ն տալիս իր հոչակավոր նախորդների փառքի դափնիները, որ աշխատել է գոնե կեղծանունով նմանվել նրանց»:

Այս էր, համառոտակի, պատճառների այն համախումբը, որ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» խորագիրը կրող նոր պոեմի ծավալուն թղթապանակը «Հայպետհրատի» գեղարվեստական գրականության բաժնում ընդունվեց, իհարկե, անհրաժեշտ ուշադրությամբ, բայց ամենևին էլ ոչ անհրաժեշտ ոգևորությամբ: Բաժնի վարիչ Գարեգին Հովսեփյանը, ընդունված հաստատուն կարգի համաձայն, շուտով թղթապանակը տալիս է ներքին կարծիք-գրախոսականի: Չանցած որոշ ժամանակ, ստացվում է գրախոսականը, որի հեղինակը, մի քանի ընդհանուր բնույթի դրվատանքներից ու քաղաքավարության տուրք գովասանքներից հետո, Պարույր Սևակի «այս գործը» անվերապահորեն գնահատել էր բացասական:

Քիչ ժամանակ անց Գարեգին Հովսեփյանը «Անլռելի զանգակատուն» թղթապանակը նորից, արդեն երկրորդ անգամ է տալիս գրախոսության: Սակայն, ավա՛ղ: Երկրորդ գրախոսականի հեղինակը, սկսած առաջին իսկ տողերից, բառացիորեն մինչև վերջին բառը, «այդ պոեմը» գնահատել էր խստիվ բացասական, չինայելով կծու ու վարկաբեկիչ ածականներ:

Երկու գրախոսներն էլ, օգտագործելով, երբեմն նույն արտահայտություններն ու դարձվածքները, Պարույր Սևակին նախ և առաջ մեղադրում էին նրանում, որ նա միանգամայն կողմնակալ ու շեշտված, միակողմանի բացասական վերաբերմունք ունի հայազգի այն կրթական-մշակութային և հասարակական գործիչների, «ժամանակի այնպիսի գիզանտների նկատմամբ», ովքեր սկսած դարասկզբի և խորհրդային կարգերի հաստատման «բոսորագույն այգաբացից», եղել են մեր ժողովրդի ազգային փառքն ու մեծությունը: Ապա դրան ավելացվում էր Մեծ հայրենականի տարիներին փառքով պսակված հերոսական անունների աստղաբույլը: Նկատվում էր, որ Սևակը իր ամբողջ գրական-բանաստեղծական գործունեության ընթացքում գեթ մի տողով ոչ միայն չի անդրադարձել նրանցից և ոչ մեկին, այլ հաստատուն կայունությամբ (գրախոսներից մեկն օգտագործել էր «մարտնչող տգիտություն» արտահայտությունը) շարունակել է իր հակամարքսիստական գործելաեղանակը, և իր այս նոր՝ «Անլռելի զանգակատուն» պոեմում գործող հիմնական անձ է դարձրել... հոգևորականին, այսինքն՝ քահանային կամ տերտերին: Սոցիալիստական ռեալիզմի գրականության պայմաններում

գաղափարական սայթաքումն այստեղ առավել քան ակնհայտ է, որը անվերապահորեն բացասական կողմից է ներկայացնում թե՛ «Անլռելի զանգակատուն» պոեմը, և թե՛ մանավանդ, նրա հեղինակին:

Գրախոսները վճռականորեն համաձայն չէին պոեմի հեղինակի հետ՝ Կոմիտասին վերագրված պատմական դերի և ազգային-երաժշտական գործունեության բնութագրության մի շարք արմատական հարցերում: Իհարկե, նրանք չէին ժխտում այն փաստը, որ «այդ վարդապետը» իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում հայ ժողովրդի շուրթերից հավաքել է նրա ազգային երգերը, դասդասել ու խմբավորել է դրանք, ստեղծել է երաժշտական խմբեր, սովորեցրել կատարել այդ երգերը, համերգային մեծ ու փոքր ծրագրերով հանդես է եկել Եվրոպայում, – բայց այսքանով էլ հենց վերջանում է նրա կատարած ամբողջ գործը (գրախոսներից մեկը միանգամայն լրջորեն նշում էր, որ երաժշտական ամենափոքր լսողություն ունեցող և «նոտայական գրականության յոթ նիշերը» իմացող ամեն ոք, կարող է ինչքան ասես ժողովրդական երգեր ձայնագրել, և ուրեմն, անել այն գործը, ինչ արել է Կոմիտասը:

Իսկ Պարույր Սևակը նրան վերածել է համազգային կուռքի ու պաշտամունքի, դարձրել է ժողովրդական սրբություն, ազգային կատարելության կերպար-նախօրինակ: Այս դեպքում, առավել քան ակնհայտ է Կոմիտասի գործի ու գործունեության «տիեզերականացված գերազնահատությունը», որը միանգամայն հակառակ է ու հակընդդեմ ռեալ իրականությանն ու պատմական ճշմարտությանը, և որը հետևաբար, «Անլռելի զանգակատունը» ներկայացնում է միայն բացասական կողմից:

Իսկ այս բոլորը, եզրակացնում են գրախոսները, – այսինքն՝ Կոմիտասի պատմական դերի ու ազգային նշանակության գերազնահատումը, – կատարվում է միայն մի, և բացահայտորեն անազնիվ միտումով՝ է՛լ ավելի բորբոքելու համար ազգային-նացիոնալիստական և շովինիստական կրքերը հայազգի ընթերցողների մոտ և հետևաբար, ամբողջ հայ ժողովրդի մոտ, մի անգամ ևս ընդգծելու նրա զավակների բացառիկ օժտվածությունն ու գերմարդկային կարողությունները, և, որ

ամենավտանգավորն է, այդ ամենը հակադրելու համար «հարևան եղբայր ժողովուրդներին» ու նրանց ստեղծած մտավոր արժեքներին:

Համապատասխան մեկնաբանությունների կամ վերոբերյալ կարծիքները ըստ ամենայնի քննություն առնելու կարիք, կարծում եմ, չկա: «Անլռելի զանգակատան» ձեռագրի վերաբերյալ ստացված երկու բացասական կարծիքները «մեծ հաջողությամբ» կատարեցին իրենց սև գործը: Գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Գարեգին Հովսեփյանին արդեն ոչինչ չէր մնում անել, քան դրանք խնամքով զետեղել Պարույր Սևակի նույն՝ «Անլռելի զանգակատան» թղթապանակում, և այն «պահ տալ» մուտքի դռան մոտ գտնվող անկիզբի պահարանին, որին սրամիտներից մեկը, քիչ փոփոխելով Մաղաքիա Օրմանյանի «Դարապատում» աշխատության վերնագիրը, կնքել էր «Դարապահում» անունով:

Սակայն, որքան էլ դա տարօրինակ թվա, Պարույր Սևակի պոեմին վիճակված չէր երկար մնալ «Դարապահումում»...

* * *

Ընկերներն ու ծանոթները Պարույր Սևակին խորհուրդ տվեցին օգնության համար դիմել... Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի՝ ազիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ Գևորգ Հայրյանին:

1959 թվականի սկզբներին, իր մտերիմ ընկերոջ ու բարեկամի՝ հանրաճանաչ բանաստեղծ Համո Սահյանի հետ, թևի տակ սեղմած «Անլռելի զանգակատան» թղթապանակը և օգտագործելով Հայրյանի հիվանդության «բարեպատեհ» առիթը, այցելում են նրան:

«Հայրյանն, իրոք, հիվանդ պառկած էր անկողնում, – հետագայում պետք է պատմեր Պարույր Սևակը, – և մեզ ընդունեց կես-բարեկամաբար, կես-պաշտոնական: Այն բանից հետո, երբ Համո Սահյանը մի քանի ժլատ նախադասություններով ներկայացրեց ինձ, և, մանավանդ, իմ «Անլռելի զանգակատունը», Հայրյանը ցանկություն հայտնեց մի քանի հատվածներ լսել «գործից»: Դժվարությամբ թաքցնելով հուզմունքս, սկսեցի կարդալ ամենասկզբից, և միաժամանակ, աչքիս տակով նայում եմ հիվանդին:

Կարդում եմ, կարդում և զարմանքով նկատում եմ, թե ինչպես է այլափոխվում Հայրյանը, ինչպես է ալեկոծվում ու վերապրում իմ կարդացածը: Այդպես էլ մինչև վերջ կարդացի իմ «Զանգակատունը», որը, ինչպես հայտնի է, բաղկացած է մի քանի հազար հոդից, իսկ որոշ հատվածներ ու մի քանի ամբողջական գլուխներ էլ Հայրյանը ստիպեց, որ կարդայի երկրորդ, երրորդ անգամ: Եվ մանավանդ նրանից հետո, երբ ես կարդացի իմ պոեմի վերջաբանը, Հայրյանը շեշտակի թափով վեր ելավ անկողնուց, դողացող ձեռքերով գրկեց ինձ, անընդհատ կրկնելով հուզումնառատ ձայնով. «Սևա՛կ ... սիրելի՛, թանկագին Սևակ, դու... դու հասկանո՞ւմ ես, թե ինչ հրաշք գործ ես ստեղծել, դու... գիտե՞ս, որ քո այս պոեմը մեր սովետահայ պոեզիայի բարձրակետերից մեկն է... դե, դե էլ ի՞նչ ասեմ քեզ, Պարույր Սևակ...»:

Իմանալով պոեմի գլխին կուտակված ամպերի մասին, Հայրյանը Պարույրից վերցնում է պոեմի թղթապանակը և հենց առաջին էջի վրա մակագրում. «Բացառության կարգով իջեցնել արտադրություն»:

Ի դեպ, հենց այդտեղ էլ վճռվում ու հաստատվում է սևակյան պոեմի խմբագիրը. Համո Սահյան:

Եվ տեղի ունեցավ աննախադեպ, գրական-հրատարակչական բոլոր երկաթե օրենքները հիմնավորապես խախտող մի երևույթ, որի նման երկրորդը գոնե վերջին տասնամյակների գրականության տարածքում գրեթե չի եղել: Երկու բացասական գրախոսականների արժանացած Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ձեռագիրը 1959 թ. կեսերին ... իջեցվեց արտադրություն:

* * *

Իսկ 1959 թվականը բարեպատեհ սկսվեց Պարույր Սևակի համար: Հայաստանի խորհրդային գրողների չորրորդ համագումարում և՛ Միության քարտուղար Էդուարդ Թովչյանի զեկուցման մեջ, և՛ գրաքննադատ Սուրեն Աղաբաբյանի ելույթում գովաբանական խոսքեր ասվեցին Պարույր Սևակի մասին: Նա ընդգրկվեց Գրողների միության վարչության կազմում:

Որոշ ժամանակ անց «Գրական թերթը» հուլիսյան համարում (№ 31) հրատարակեց պոեմի «Միջօրեի ահագանգ» գլուխն ամբողջությամբ՝ «Ղողանջ

ուխտագնացության» ընդհանուր խորագրի ներքո: Թերթում այդ գլուխն ունի «Վանքի բակում» վերնագիրը, որը հետագայում հեղինակը դուրս է թողել պոեմից: Հատվածին կցված էր հետևյալ, առաջին հայացքից դրական գրախոսական հիշեցնող ծանոթությունը. «Շուտով Հայաստանի պետական հրատարակչությունը լույս կընծայի Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, նվիրված մեծն Կոմիտասին: Պոեմում, Կոմիտասի կյանքն ու գործունեությունը պատկերված են հայ ժողովրդի կյանքի ու պայքարի, կենցաղի ու տպավորությունների, նրա ծանր ու տառապալից անցյալի ֆոնի վրա: Պոեմն ավարտվում է վերածնված հայ ժողովրդի, նրա նոր կյանքի փառաբանությամբ»:

Այո՛, լավ էր սկսվել 1959 թվականը Պարույր Սևակի համար:

* * *

... Սակայն քնած չէին Սևակի պոեմի մասին «կարծիք» գրած մարքսիստ քննադատները, ժամանակակից հայ գրականության գաղափարական անադարտության օրթողոքս ու ջերմագին պաշտպանները: Ըստ որում, առանց Մոսկվայի և ԽՄԿԿ-ի թելադրանքի ու ճնշման, այլ ինչպես հաճախ էր լինում, սեփական նախաձեռնությամբ:

Թե կոնկրետ ինչ ձևով դրսևորվեց նրանց գործունեությունը, այսօր շատ էլ հանգամանորեն ու որոշակի հայտնի չէ: Բայց առավել քան որոշակի է նրանց գործունեության հետևանքը՝ պոեմի հետ կապված հետագա հրատարակչական աշխատանքները դադարեցվեցին: Մի բան, որն, ի դեպ, հոգեկան մեծագույն ապրումների ու նյարդային-ջղաձիգ վիճակների պատճառ դարձավ նրա հեղինակի համար:

Եվ «Հայպետհրատի» տնօրեն Վահագն Մկրտչյանը, հավանորեն երկար մտորումներից հետո, կարողացավ գտնել հարցի միակ ճիշտ-տրամաբանական և շահագրգռվածորեն-զգուշավոր լուծումը: Նա որոշում է արդեն կիսաշարված գործի ձեռագիրը նորից, այսինքն՝ երրորդ անգամ, տալ լրացուցիչ կարծիքի: Համապատասխան գրախոսի ընտրությունը, ի վերջո, կանգ է առնում այն ժամանակ բանասիրական գիտությունների թեկնածու, Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող և հանրապետության գրական-քննադատական կյանքում անուն ու կշիռ ունեցող Սերգեյ Սարինյանի վրա:

Նկատի ունենալով պոեմի գլխին եկած նախապատմության բոլոր հանգամանքները, գրաքննադատի առջև դիլեմման դրված էր շատ կտրուկ ու հստակ: Բնականաբար, պատասխանն էլ պահանջվում էր այդպիսի: Մերգեյ Սարինյանը հրաշալի գիտակցում էր այդ և...

Եվ կարծիք-գրախոսականի հենց վերնագիրը՝ «Սովետահայ պոեզիայի նոր նվաճումը», առավել քան հստակորեն բնութագրում է գաղափարական այդ նպատակաուղղվածությունը, որն առանցք ու հիմք էր հանդիսացել գրականագետի համար, իր տեսակետները շարադրելիս:

«Անտարակույս «Անլռելի զանգակատունը» Պարույր Սևակի բանաստեղծական տաղանդի ամենացայտուն արտահայտությունն է, որն իր ուրույն տեղը կունենա հայ պոեզիայի պատմության մեջ: Բանաստեղծական վերացականությունը, պատկերների հորդահոս հաջորդումը, բառերի տարափը, տարերքի հասնող ռիթմը տեղ-տեղ ուղղակի հիշեցնում է Նարեկացուն»: Կամ, ահա այս. «Շռայլ է Պարույր Սևակի բանաստեղծական երևակայությունը: Ինտելեկտուալ հարստությունը նա հիանալիորեն զուգակցել է պատկերների պոետիկական հրապույրին և հասել բանաստեղծական զգացմունքի զարմանալի ներհունության: Այս միասնության մեջ բանաստեղծի ներշնչման տարերքը հորդաբուխ է, անկաշկանդ, բառի հարստությունը, պատկերների անակնկալ հայտնագործումը, որոնք երբեմն տարօրինակ են ու ապշեցուցիչ, հաջորդում են իրար չթուլացող թափով, չընկրկող համարձակությամբ» և այլն:

Իհարկե, արվել են և սկզբունքային, հաճախ նույնիսկ շեշտակի, քննադատական դիտողություններ: Սևակյան հոյակապ պոեզիան հաճախ խառնված էր «սովորական հանգաբանությանը», որը զգալի է «Անլռելի զանգակատան» գրեթե բոլոր գլուխ-դողանջներում: Անթերի տիրապետելով բանաստեղծական արվեստի բոլոր նրբություններին, Սևակը, սակայն, երբեմն դիմում է բառային անիմաստ կրկնությունների ու միևնույն միտք-գաղափարը նույնանման արտահայտություններով ու բառերով շարադրելուն, որը հաճախ շուտասելուկ է հիշեցնում: Եվ նույնիսկ՝ «Բանաստեղծության պատկերի և տողի այսպիսի հասարակացումը տանում է դեպի պոեզիայի ոչնչացում» և այլն (Պարույր Սևակը հետագայում ասելու էր, որ հաշվի

առնելով քննադատների դիտողությունները, ինքը մոտ հազար տող կրճատել է իր պոեմից): Բայց չնայած այս և նման բնույթի այլ դիտողություններին, «Անլռելի զանգակատանը» տրված Սարինյանի վերջնական գնահատականը որևէ տարակույս չի հարուցում: Այն, առավել քան որոշակիությամբ արդեն արտահայտված էր կարծիք-գրախոսականի՝ վերը բերված վերնագրում:

Չէր անցնելու մի քանի ամիս, և «Գրական թերթը» 1959 թ. նոյեմբերյան համարում (№ 45) իր ընթերցողներին «Նոր գրքեր» ընդհանուր խորագրի ներքո, տեղեկացնելու էր, որ հրատարակվել է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» 267 էջանոց պոեմը, 5000 տպաքանակով: Էլի մի քանի ամիս անց, նույն թվականի դեկտեմբերյան համարում, «Գրական թերթը» հրատարակելու էր գրականագետ Սուրեն Աղաբաբյանի «Ոգևորություն և վարպետություն» բնորոշ խորագիրը կրող՝ եթե կարելի է այսպես ասել, հիացականորեն-շոնդալից գրախոսականը, որն ասեն գալիս էր է՛լ ավելի ամրապնդելու ու գրականագիտորեն կայունացնելու Պարույր Սևակի պոեմի տեղն ու դերը մեր գրականության հոգևոր կյանքում, որովհետև այն «բանաստեղծական տաղանդի իսկական բխվածք է, խոր ներշնչման և գրական անուրանալի վարպետության արտահայտություն, սովետահայ չափածոյի նոր նվաճումը»:

Նպատակ, 1995, № 15, սեպտեմբերի 1